

սակայն լուկ այդ առթին յատուկ չէր : Սովորական կոչնոց մէջ մեծաշուք բազմականաց եւս կրնար ուղղուիլ այն, ինչպէս յայտնի է Պատմահօր աւանդութեան ճաշէն, ուր խորնոյ անծանօթ ալեւորն «եկաց առաջի հայրապետին, սկսեալ զբանս երաժշտականս» առ զահագլուխ մեծ հիւրը, որոյ սկիզբն էր այսպէս. «Ո՛վ արքայակերպ տէր քահանայապետ սուրբ, հովուապետ բարի եւ նմանեալ առաջնոց» (Հյպտ. 195): Եւ կը յարէ՝ թէ «ի կարգին երիս տունս ասաց». ուսկից կը հետեւի՝ թէ աւանդութեանս խմբագրութեան ժամանակ այդ երգը ծանօթ էր արդէն :

Բուն գուսանք, կամ լաւ եւս ասոնց մէկ դասը, նուագածութենէն շատ աւելի վատթար պաշտօն մ'ալ ունէին¹, զոր կենդանի նկարագրով մը մեր առջեւ կը դնէ պերճաբան Մանդակունին : Անոցմէ ոմանք, — որոց համար մեք ալ կրնանք ըսել՝ «զոր եւ շաղակրատուն կոչեն» (Ոսկ. Թղթ. Ա, 851), ինչպէս արդեամբ կը կոչուէին ալ (Փրպ. 511), — աղտեղի եւ յիմարական խօսքեր կ'ընէին. եւ հայրապետը կը լսէր այդ «վաւաշ գուսանաց» բերանին մէջ՝ «բազում խեղկատակութիւնս եւ մո-

1. Ոսկերերանի միւմսն հայ Թարգմանչէն կը փոխուի գոռսան (Թղթ. Ա, 468. եւ աստ, 213):